



Գառնի-Երևան ջրամատակարարման համակարգի անցում ինքնահոսի

Երկիր. Հայաստանի Հանրապետություն

Պատվիրատու Համաշխարհային Բանկ, ՀԶԾՂԳ


Ժամկետները. մայիս - հուլիս 2001թ.

Ծառայության մոտավոր գինը

87 500 ԱՄՆ դոլար


Տեխնիկական առաջադրանք

1. Գործող համակարգի նախանախագծային ուսումնասիրություններ և մոդելավորում:
2. Նախագծային առաջադրանքի հստակեցում, նախագծի նախնական տարբերակի կազմում:
3. Աշխատանքային նախագծերի և մրցութային փաստաթղթերի մշակում:



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

- ✓ Ուսումնասիրվել է Գառնի-Երևան ջրամատակարարման գործող համակարգը: Գործիքային ուսումնասիրությունների ընթացքում կատարվել է 35.0կմ երկարությամբ ջրատարի ուղեգծի հայտնաբերում, տրամագծերի փոփոխման սահմանների որոշում, թելադրող կետերում էլքերի և ճնշումների չափումներ, գրանցումներ:
- ✓ Դաշտային ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա համակարգչային EPANET ծրագրով կատարվել է գործող ջրատարի հիդրավիկական մոդելավորում:
- ✓ Դաշտային ուսումնասիրությունների և հիդրավիկական մոդելավորման փոխհամակցվածությամբ պարզաբանվել է ջրատարի իրական պատկերը, նրա թողունակությունը և փաստացի տեղափոխվող ջրաքանակը:
- ✓ Մշակվել են նախագծային տարբերակների 3 առաջարկություններ, կատարվել են տեխնիկատնտեսական հիմնավորումներ, որոնց արդյունքների հիման վրա հստակեցվել է նախագծային առաջադրանքը:
- ✓ Նախագծվել է մոտ 20կմ ընդհանուր երկարությամբ ջրատար Ø800մմ և Ø900մմ տրամագծի պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից:



- ✓ Նախագծվել են երկու նոր կապտաժային կառուցվածքներ:
- ✓ Նախագծվել են ընդհանուր թվով 34 ջրամատակարարման տարբեր հանգույցներ (մարիչ հոր, թողարկներ, օդաթողեր, ջրաչափական և այլ հանգույցներ):
- ✓ Նախատեսվել է քլորակայանի շենքի վերակառուցում և չոր դոզավորման վակուումային քլորատորների համակարգի տեղադրում:
- ✓ Աշխատանքային նախագծով մշակվել են տեխնոլոգիական և շինարարական գծագրեր, շին. աշխատանքների կազմակերպման նախագիծ, ծավալների ամփոփագրեր, տեխնիկական մասնագրեր: Ներկայացվել են մրցառքային փաստաթղթերի և միջազգային գնումների մասնագրերի փաթեթներ:
- ✓ Աշխատանքային նախագծերը մշակվել են LisCAD, AutoCAD, ArcView GIS համակարգչային ծրագրերի օգտագործմամբ:

Աշխատանքի նպատակն է.

1. Գառնի-Երևան համակարգից սնվող թաղամասերի ջրամատակարարման հուսալիության բարձրացում:
2. Շահագործման ծախսերի կրճատում` պոմպերով մղման համակարգից ամբողջովին ինքնահոսի անցման ճանապարհով:
3. Գառնի-Երևան համակարգով տրվող ջրաքանակի ավելացում:

